№ 209 ՇՈՐԵՔՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱԲՄՐՈՒՆԻ

ՇՈՐԵՔՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27 № 209

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի. առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊԷԿՈՎ

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Կամ Tiflis, rédaction «Msak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և ազգ օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

Բացված է բաժանորդագրութիւն

„ԵՐԿՐԻ ՁԱՅՆԸ"

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ,

ՈՐԸ ԼՈՒՍ ԿԸ ՏԵՍՆԷ Հոկտեմբերի 7-ից։

«Երկրի Ձայնը» զբաղվելու է մասնաւորապէս Թիւրքահայ կեանքով և Թիւրքահայկական հարցով։ Նա ձգտելու է ստեղծել հայ-Թիւրքական համերաշխութիւն։

Տարեկան բաժանորդագրութիւնն է. Թիֆլիսում 3 ր. 50 կ., գաւառներում 4 ր., արտասահմանում 12 ֆրանկ։

Հոկտեմբերի 1-ից մինչև տարվայ վերջը 1 ռուբլի։

Բաժանորդագրութեան համար դիմել՝ Тифлисъ, редакція «Еркри Дзайнъ», Грибоѣдовская № 16, д. Зубалова. կամ Tiflis, rédaction de l'«Erkri Dzaïn», Griboedovskaya, № 16. կամ «Գուտենբերգ» գրավաճառանոցին։

առ. 3—5

ԱՐԹԱՆ ՎԱՃԱՌՈՒՄ

Դէպքով գնել ենք զանազան գործարաններից արտասահմանեան և ռուսաց արհեստանոցների մահուդէ ապրանքներ՝ տրիկո, շորեղէն և վերարկուացու կտորներ։ Վաճառքը նշանակվում է սեպտեմբերի 18-ից։ Գները անխոս։ Անդրվում է Թիֆլիսի հասարակութեան՝ չը զլանալ այցելելու—Суконный магазинъ, подъ Артистическимъ Обществомъ Головинскій пр. 8—10

Յուլիսի 1-ից

ԲԱՑՎԱԾ Է

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ

„ՊՕՂՈՍԵԱՆՆԵՐԻ"

Արմենանկի-բազար տուն Զուժուխանէի 2-րդ յարկ

Վաճառվում են ամեն տեսակ մանուֆակտուրային ապրանքներ մեծ քանակութեամբ և թոփով շատ մատչելի գներով։

առ. 2· Հ· 10—20

ԿԵՆՏՆՈՅ ԿԼԻՆԻԿՍՅԻ

պրոֆ. Սանկտ-Պետերբուրգի նախկին օրդինատոր

ԲԺՇԿԱՊԵՏ

Դ. Ն. ԱԹԱԲԷԳԵԱՆ

Ընդունում է կանայք և մանկաբարձական հիւանդութիւն ունեցողներին Մոսկվայում։ Աորդրգակցութիւնը պրոֆիլսորների մասնակցութեամբ։ Հասցէն՝ Тверская, Козицкій пер., д. Бахрушина, кв. 230.

առ. 1—10

ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ

յայտարարում է ի գիտութիւն ընկերութեան անդամների, որ, հոկտեմբերի մէկին, արտասական ընկերութեան դահլիճում, ժամը 11-ին կայանալու է ընդհանուր ժողով։

Պարապմունքներ։

1) Զեկուցում թատրական սեղանի մասին։
2) Գ. պ. Աբէլեանի և Մուրադեանի առաջարկութիւնը՝ կանոնադրութեան փոփոխման մասին։
3) Մրցանակաբաշխութեան մասնաժողովի զեկուցումը։
4) Ընտրութիւններ՝ վարչութեան մէկ անդամի ի տեղի հերթով դուրս եկող պ. Ռ. Յովհաննէսեանի, և վերատուգող մասնաժողովի անդամների։

առ. պ. 24, 27, և հ. 1-ին 2—3

Ա. ՄԵԼԻՔ-ԱԼԱՀՎԵՐԴԵԱՆ

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ և ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ

առարկաների դասեր։

առ. Межевая, 2. 7—20

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ, ՊԱՏՄՈՒԹԵԱՆ և ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԱՍԵՐ

Ընտանիքներում

Ա. Մ. ԵԶԵԿԵԱՆ

Հասցէն բանակցութեան համար՝ Ул. Петра Великаго (бывш. Лабораторная) № 21.

առ. 16—20

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմորումներ. Վերջին տեղեկութիւններ. Տեղեկութիւններ գաւառից. Ժողովրդական ազատութեան կուսակցութեան համագումարը Հելսինգֆօրսում. Յովհաննեան գպրոցի դէպքը. Բողոքներ. Բարձրագոյն գպրոցներում. Բէրլէր ընդհանուր գործադուլի մասին. Նամակ Շուշից. Ճապօնիան և Իտալիա. Դպրոցական գործը. Նամակ Նոր-Բայազէտից. Իմ պատասխանը. Նամակներ խմբագրութեան. Տաղերներ. Ներքին լուրեր — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԽՄՈՐՈՒՄՆԵՐ

I

Թիւրքիային նուիրած մի քանի յօդուածներում, որ մենք զետեղեցինք «Մշակ»-ում «Սուլթանների երկրում» (տես «Մշակ» №№ 187, 188 և 190) վերնագրով, մենք ասացինք, թէ Թիւրքիան պահպանում է իր քաղաքական գոյութիւնը այն պատճառով, որ Եւրոպան ցանկանում է այդ գոյութիւնը։

Եւրոպան կամ պետութիւնները ունեն Թիւրքիայում շահեր և նրանցից իւրաքանչիւրը աշխատում է կաբելիին չափ ընդարձակ կերպով հասկանալ այդ շահերը։ Եւ եթէ այսօր անյարմար է վերցնել և բաժանել Թիւրքիայի հողերը, դրա փոխարէն պետութիւնները աշխատում են մի կողմից իրանց ձեռքը գցել մի շարք արտօնութիւններ, իսկ միւս կողմից որոշել իրանց ազդեցութիւնների շրջանները։

Այդպիսով իւրաքանչիւր պետութիւն մտածում է միայն այն բանի մասին, թէ ինչ մաս պէտք է վերցնի իր համար այն մեծ ժառանգութիւնից, որ կոչվում է օսմանեան պետութիւն։ Եւ եթէ այդ մասը չէ կարելի սահմանել Թիւրքիայի անմիջական բաժանումով, այդ միջոցը կարելի է իրագործել նախնական մի շարք գործողութիւններով։

II

Բայց ժառանգութեան մասին մտածող եւրոպական պետութիւնները չեն կարող մոռանալ, որ կան այդ ժառանգութեան մասին և ուրիշ մտածողներ։

Դրանք Թիւրքիայում ապրող ժողովուրդներն են՝ Թիւրք տարրի զանազան ճիւղաւորութիւնները, հայերը, յոյները, մակեդոնացիները, դրուզները, քիւրդերը և այլն։

Դրանք են երկրի բնակիչները և դրանք են նրա իսկական տէրերը։ Եւ եթէ ինքը օսմանեան պետութիւնը աւելի կենսունակ, աւելի հեռատես դեկավարների ձեռքով կառավարվում լինէր, անկասկած, երկիրը այժմ էլ կը գտնվէր իր իսկական տէրերի ձեռքին և ներկայացնում կը լինէր մի մեծ ոյժ, որից կը պատկառէին եւրոպական պետութիւնները։

Բայց Բոսֆորի ափերում երբէք անկեղծ կերպով չը ցանկացան վերակազմել պետութիւնը եւրոպական մտքով և ուենենալ քաղաքացիներ։ Այնտեղ գերադասեցին ունենալ նուաճված, հնազանդ և ստրկի, քան թէ քաղաքացիների։

Եւ տխուր արդիւնքը մեր առաջ է։

III

Թիւրքիան, որի վրա մեծ պետութիւնները նայում են իբրև իրանց ժառանգութեան վրա և որը նրանք կը բաժանէին, եթէ հնարաւորութիւն ունենային, կարող է պահպանել իր գոյութիւնը դեռ շատ ու շատ տարիներ, որքան էլ դա հակառակ լինէր իրերի տրամաբանութեան։

Ինչու։

Որովհետև դժուար է բաժանում կատարելը։ Որովհետև շատ դժուար է լուծել մի շարք միջազգային և տեղական խնդիրներ, որոնք կապված են այդ բաժանման հետ։

Եւ ահա այդ բաժանման մեծ դժուարութիւնը և նրա հետ կապված խոշոր հետևանքների լրջութիւնը ստիպում են յետաձգել ամեն մի առաջարկ այդ բաժանման մասին և հաշտեցնել քաղաքականութիւնը Թիւրքիայի գոյութեան հետ։

Դիպլոմատների տեսակէտով Թիւրքիայի գոյութիւնը պահպանվում է ոչ թէ այն պատճառով, որ նա կրում է իր մէջ բարոյական մեծ ոյժ և կազմակերպող ոգի, այլ այն, որ այդ բաժանումը ներկայումս անկարելի է այնպէս կատարել, որ նա զոհացում պատճառէ շահախնդիր կողմերին։

IV

Այսպէս թէ այնպէս Եւրոպան հաշտվում է Թիւրքիայի գոյութեան հետ և ներկայումս չէ ցանկանում նրան բաժանել և կորատել։

Հանդէս կը գայ արդեօք մի այդպիսի առաջարկ, իբրև հերթական խնդիր, թէ նա դեռ երկար ժամանակ կը համարվի վաղահաս կամ անյարմար, այդ դուրս է այսօրվայ մեր տեսութիւնից և մենք չենք ցանկանում այժմ հաւանական ենթադրութիւններ անել. բայց պարտաւոր ենք աչքի առաջ ունենալ իրականութիւնը իր պայմաններով և նրա հետ տեսնել մեր հաշիւները։

Եւրոպան ընդունելով և պահպանելով Թիւրքիայի գոյութիւնը՝ անշուշտ պէտք է այնպէս պայմանաւորէր այդ գոյութիւնը, որ նրա մէջ ապրող ժողովուրդները կարողանային փոքր ի շատէ տանելի կեանք ունենալ։ Դէպքդաբար՝ Եւրոպան միայն բաւականացաւ մի քանի դաշնագիրներով, կօնֆերենցիաներով և վեհաժողովներով, որոնք թղթի վրա ծրագրեցին Թիւրքիայի համար պարտաւորութիւններ, իսկ գործնական միջոցներ չը մշակեցին իրանց պահանջները կատար ածելու նպատակով։

V

Այժմ Թիւրքիայում ապրող ժողովուրդները, ինչպէս և մի քանի տասնեակ տարիներ սրանից առաջ, կանգնած են նոյն հիմնական և խոշոր հարցի առաջ, այն է՝ ինչ անեն նրանք, երբ Բարձր Դուռը ոչ մի էական բարեփոխութիւն չէ մտցնում երկրի կառավարութեան մէջ, երբ նա մնում է նախկին ասիական պետութիւնը և ժրխտում է եւրոպական պետական կեանքի հիմունքները։

Թիւրքիայի ազատամիտ անձնաւորութիւնները, որոնց թիւը հրապարակի վրա մեծ չէ, յոյս ունեն շուտով տեսնել Թիւրքիայի մէջ սահմանադրութիւն, բայց անկարող են մատնացոյց լինել որոշ ապահովութիւնների վրա, որոնք երաշխաւորէին այդ սահմանադրութեան ամրութիւնը և կենսունակութիւնը։

Մի բան յամենայն դէպս նշանակալից է, որ Թիւրքիայում նկատվում են մտքերի յուզման նշաններ քաղաքական հողի վրա։

Ա. Բալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Արժանահաւատ աղբիւրից ստացած մի տեղեկութիւն հաղորդում է հետևեալը.

Կ. Պոլսի կառավարութիւնը յայտնել է Ուրմիայի և Սօուղ-Բուլաղի սահմանագծի մօտ եղած Թիւրքական զօրագնդերին յետ քաշվել սահմանագծից դէպի Թիւրքական հողերը։ Կախիլայի մօտ եղած զօրքերը կը մնան իրանց տեղում, մինչև որ մի յատուկ յանձնաժողով կը պարզէ սահմանի վերաբերեալ խնդիրները։

Թիւրքայ զօրապետը զեկուցել է պարսկական կալուածատէրերին, որ նրանք կարող են վերադառնալ իրանց կալուածքները և ազատօրէն վարել իրանց տնտեսութիւնը։

—

Նախիջևան գիւղ (Կաղզուան), 18 սեպտեմբ.

Երկու տարի է, որ ամեն տեղերից չափազանց վատ լուրեր էինք լսում, բայց մեր ամբողջ Կարսի շրջանը զերծ էր մնացել այդ տեսակ չարիքներից. բայց ահա մօտ 5—6 ամիս է, որ մենք էլ դրեթէ շրջապատված ենք չարիքներով. թերևս բացայայտ կերպով ոչ մի արշաւանք չէ եղել, բայց աւազակային մեծ խմբեր են առաջ եկել քրդերի միջից, որոնք ամեն շաբաթ և ամեն օր կորում են խաղաղ մարդկանց ճանապարհը, կողոպտում և սպանում են ամեմեղ ճանապարհորդներին։

Այս ամենը լսում և տեսնում էր կառավարութիւնը և որքան աշխատում էր այդ աւազակային խմբերը բռնելու, այդ չէր աջողվում նրան։ Օգտվելով այդ դրութիւնից, վերջերս քրդական աւազակային մի խումբ յայտնվեց, որոնց անդամներն Բազարջուղի և Թուրքմանաշէնի քրդերը պահում են իբրև ջանքեզարներ և որոնց հետ միացած է բնիկ տեղացի քիւրդ երիտասարդութիւնը, որոնք թշնամանալով իրանց դրացի եզիդիների հետ, բացայայտ կերպով 30-ի չափ զինված ձիաւորներ մօտերս վառեցին Սուսզի եզիդիների ամբողջ գիւղի խոտերը և ապա եկան Եայլի եզիդիների խոտանոցները վառեցին, և կանգնած խոտանոցների մօտ՝ կանչեցին գիւղացիներին և ասեցին.—«Այսօր ձեր խոտը վառեցինք, էգուց էլ ձեզ ձեր ընտանիքով կը վառենք»։ Բաղաչեցի եզիդիները մաւրսկցի հայերի հետ համեալով՝ երկար կռիւներ արեցին և հազիւ կարողացան աւարը յետ ստանալ աւազակային խմբից։ Երկու յոյն սպանեցին Բազարջուղի մօտ և մի հատ հայ։ Այդ աւազակներն երկիւղից մեր կողմերում երթևեկութիւնը կարվել է Կարսից բայց նամակս խմբագրութեանդ գրած օրը, գաւառապետ իշխ. Զավախօվը Կարսի նահանգապետից բերել տուեց կօզակների մի խմբակ, շրջապատեց Բազարջուղ և Թուրքմանաշէն քրդաբնակ գիւղերը, որոնց բնակիչները նոր տեսակ հրացաններով զինված են Տաճկաստանից եկող Չանբեզարների հետ։ Կառավարչական այս ցոյցը գուցէ կարող է մի առ ժամանակ խաղաղ պահել այս տեղերը։ Թէ ինչ արեց իր կօզակներով մեր գաւառապետ իշխ. Զավախօվը, մի այլ անգամ կը գրեմ։

Խրօ

Յ.Գ.—Մոռացայ գրել, որ այդ քրդերը, որոնք Չանբեզարներ են պահում իրանց տներում, արդէն անցագիր առել են և մօտերս իրանց ընտանիքով գաղթելու են Տաճկաստան։ Դրա համար մտածել են ընդհանուր չարիքի պատճառ հանդիսանալ տեղիս խառն ազգաբնակութեան. որովհետև իրանց դրացիների մեծ մասը չը համաձայնվեցին իրանց հետ գաղթելու, դրա համար էլ ուզում են թշնամութիւն առաջ բերել, որպէս զի այստեղ մնացող քրդերը հետևեն իրանց օրինակին։ Այժմ 120 տուն քրդեր, յատուկ անցագրով պատրաստ, գնում են Տաճկաստան։

Նոյն

Շամշադին, 24 սեպտեմբերի

Հայ-Թուրքական յարաբերութիւնը տեղս բաւականին լաւացել, մտերմական է դարձել. հայերը առանց երկիւղի սկսել են իրանց կանոնաւոր երթևեկութիւնը թէ մօտակայ Թուրք գիւղերը և թէ Թովուզ կայարան։ Սակայն Հասան-սուի ձորում հայերի և Թուրքերի մէջ դեռ սառնութիւն և անվստահութիւն է տիրում. յարաբերութիւնը խզված է, երթևեկութիւն չը կայ. ինչպէս լսում ենք, Թուրք Թաթլու, Քեօնան-Ղշլաղ և Եարաղլու գիւղերը շատ զրգռված են ընդհանրապէս հայ Թաթլու գիւղի և մասնաւորապէս նոյն գիւղացի մի քանի անձանց դէմ, թէ իբր այդ անձինք են եղել իրանց դժբախտութիւնների պատճառը հայ-Թուրքական կռիւների ժամանակ. սակայն մենք կասենք, որ հարևան Թուրքերը ի զուր են մեղադրում յիշեալ անձանց, քանի որ նրանք անցեալ կռիւների ժամանակ նոյնիսկ բացակայ են եղել գիւղից և ոչ մի ներգործական դեր չեն խաղացել կռիւների մէջ։ Նոյնպէս գիւղին չէ կարելի մեղադրել, քանի որ անցեալ կռիւները, ինչպէս Թուրքերի, նոյնպէս և հայերի մէջ ընդհանուր ազգայնական բնաւորութիւն ենս ունեցել։ Այս բոլորն ասելով հանդերձ կը ցանկանայինք, որ հարևան Թուրքերը չը հաւատային չարախօս և վատասիրտ մարդկանց խօսքերին, անտեղի չը մեղադրէին անմեղ մարդկանց և մահվան սպառնալիք չը կարդային նրանց հասցէին։ Բաւական է, հարևաններ. քանային գողացաք, զենուրին գողացաք, այժմս էլ մի քանի անմեղ եզներ էք ընկել. մի՞թէ դա բարեխղճութիւն է, մի՞թէ ընդդէմ չէ արդարութեան, ճշմարտութեան։ Լաւ չէր լինի եթէ ապրէինք միմեանց հետ հաշտ և սիրով։

Հայ գիւղերում վերջերս գողութիւններն ահագին չափերի են հասել. օր չէ անցնում, որ ոևէ գիւղից անասուն չը գողացվի։ Եթէ ներկայ գողութիւններին աւելացնենք անցեալ զրկանքները և տարվայ անբերրիութիւնը՝ կը ստացվի մի խղճալի վիճակ, որին ենթարկված է Շամշադինի հայ գիւղացին։ Գիւղացին զրկվում է իր միակ ունեցածից. անխիղճ մարդիկ չեն խնայում նոյնիսկ նրա լծկանը, որի վրա նա դրել է իր յոյսը։ Որպէս զի որոշենք գողութիւնների չափը, բերենք վերջին երկու շաբաթվայ ընթացքում հայ գիւղերից գողացված անասունների ցուցակը.

Ներ. Կար. Աղբիւր.	25	ան.	(ձի և եզ. կ.)
Թովուզից. . .	38	»	» »
Վեր. Կար. Աղբիւր.	28	»	» »
Բերդից. . . .	18	»	» »
Զորաթանից . .	15	»	» »
Դրդեցուց. . .	23	»	» »
Ղուլալուից . .	9	գոմէշ.	
Ընդամ.	156	շունչ.	

Հեշտ է ասել 156 շունչ, սակայն թէ ինչ արիւն-քրտինքով է ձեռք բերված այդ բոլորը, դա աղքատ գիւղացիները միայն կը հասկանան։ Զը մոռանանք ասել, որ Թաթլու և Հախում հայ գիւղերում մինչև հիմա գողութեան դէպքեր չեն պատահած. և դա երևի այն պատճառով, որ յիշեալ երկու գիւղերի և հարևան Թուրքերի մէջ երթևեկութիւն ու յարաբերութիւն չը կան։

Տեղական ոստիկանութեան լուրջ ուշադրութիւնն ու աջակցութիւնն ենք հրաւիրում վերացնելու տեղս կատարվող անասուր գողութիւնները և պատժելու յանցաւորներին։

Ցակոբ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ՀԷԼՍԻՆԳՖՕՐՍՈՒՄ

Հէլսինգֆօրս, 25 սեպտեմբերի

Կէսօրվայ ժամը 2-ին Շվէդական նոր դպրոցի շինութեան մէջ բացվեց սահմանադրա-ռամկավար կուսակցութեան հաժակայսերական համագումարը։ Քաղաքի հիւրանոցները բոլորը լի են. պատգամաւորներից շատերը իջևանել են մասնաւոր բնակարաններում. համագումարը չը գումարվեց բուն հայրենիքում, և պէտք է օգտվի մի երկրի հիւրասիրութեամբ, որ ձեռք է բերել ազատութիւն, օրէն ձգտում է համայն Ռուսաստանը։ Պետրունկեվիչը առաջարկում է կուսակցութեան յարգել Հէրցէնշտէյնի յիշատակը յոտնկայս, կուսակցութեան հաշուով տանել աճիւնը Մոսկվա և այրիին ուղարկել ցաւակցական մի հեռագիր։ Պատգամաւորներին բաժանվում է կենտրօնական կոմիտէի պատրաստած բէզոլիւցիաների նախագիծը։ Ժողովին ներկայ են գտնվում ինչպէս ռուս, այնպէս և օտարազգի շատ թղթակիցներ։ Առաջին նիստում մասնակցում էին 171 պատգամաւոր, որոնք հանդիսանում էին իբրև ներկայացուցիչներ 43 նահանգների և 4 շրջանների։ Պատուիրակների մէջ շատ կան նախկին պատգամաւորներից։ Նախագահ ընտրվեց իշխան Պաւել Դոլգօրուկով, օգնականներ՝ Տէպէնկո, Աբժանակով և իշխան Դիմիտրի Շախովսկի։ Նախագահը, ողջունելով համագումարի բացումը, ժողովականներին յայտնում է, որ, 1) համագումարը իր համակրութիւնն է յայտնում Դումայի պարլամենտական ֆրակցիայի գործունէութեան՝ գտնելով որ այդ գործունէութիւնը համապատասխան էրընդհանուր տակտիկան այն ցոցման (դիրեկտիվ), որը յայտնագործվեց կուսակցական երրորդ համագումարում. 2) ընդունելով վիբօրգեան կոչի քաղաքական նշանակութիւնը և սկզբունքով հաճանալով նրա բովանդակութեան հետ, —համագումարը հաւանութիւն է տալիս պարլամենտական ֆրակցիայի գործողութիւններին, ֆրակցիայի, որ իր վրա վերցրեց կոչ կազմելու նախաձեռնութիւնը. 3) համագումարը նպատակ է համարում պասիվ ընդդիմադրութիւնը ընդարձակ կազմակերպչական գործադրութեան պայմանով, համաձայն ժողովրդական ազատութեան կուսակցութեան տակտիկայի ընդհանուր սկզբունքներին. գտնում է, որ այդ իդէայի տարածումը, հիմնաւորումը և ճեպընթացութիւնը ժողովրդական գիտակցութեան մէջ պէտք է կազմեն կուսակցութեան նպատակներից մէկը, գտնում է, որ պասիվ ընդդիմադրութիւնը կարող է գործադրվել որպէս աւելի հակադիր մի ձև ընդդիմադրութեան—կառավարութեան ակտերի դէմ. 4) համագումարը գտնում է, որ այժմ ի տես չը կան առանձին փաստաթղթեր, որով կարելի լինի բաւականաչափ ընդարձակ կերպով իրականացնել պասիվ ընդդիմադրութիւնը ինչպէս ընդհանրապէս, այնպէս և մասնաւորապէս—1906 թւի համար զինուորներ չը տալու մերժման ձևով, և այդ հիման վրա հաստատումը կարող չէ գտնում առաջարկել ամբողջապէս գործադրել պասիվ ընդդիմադրութիւնը. 5) ներկայ մօտենալի պայմաններում համագումարը կուսակցութեան գործունէութեան նպատակն է համարում պատրաստվել ընտրողական շրջանի համար. համագումարը անհրաժեշտ է համարում Դումայի կողմից մի նոր պատասխանուղերձ պատրաստել գանական ճառին յաւելումներով, որ բղխեին կուսակցութեան ծրագրից (հեռագիրը այստեղ ընդհատվում է), առանձին ուշադրութիւն դարձնելով հանդերձ Դումայի օրէնսդրական և բիւջէական իրաւունքների ընդլայման անհրաժեշտութեան վերա։ Հաճախագումարը ընտրեց յատուկ մասնաժողովները—ագրարային, ֆինանսական, կազմակերպիչ և արհեստակցական շարժման աջակցելու համար։ Ընդհանուր արամադրութիւնը—ձգտել մի եզք գտնելու վիբօրգեան կոչից (?)։ Ընդհանուր կարծիք է, որ նա կը վերացվի պահպանելով միայն արտաքին ձևերից մի քանիսը։ Տպագրել արգելվում է։ Մուրոմցեվը չէ եկել և մտադիր է չը գալու։ Դոլգօրուկովը յայտ է յայտնում, որ հաժագումարը կաշխատէ միացնել կուսակցութեան և ուժեղացնել սահմանադրական շարժումը, և յոյս ունի, որ համագումարը չի հակվի ծայրահեղութեան կողմը։ Պետրունկեվիչը յայտնում է, որ Հէրցէնշտէյնի սպանութեան մեղսակից պէտք է փնտրել նրանց մէջ, որոնց շահերը ոչնչացրին սոցիալական գրաւման հողային հարցի լուծմամբ։

(Կը շարունակվի)

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Բարսում գիւղ (Գանձ գաւ.), սեպ. 15-ին

Մեր շրջաններում դաշտային աշխատանքների սեզօնը վերջացաւ։ Ընդհանուր առմամբ հացապտղի եկը վատ է. այս տարի, կարծես, հենց կանխակալօրէն վիճակված էր հայ գիւղերին նախկին տարիների կիսատաս բերքից էլ զրկվելու։ Իր գոյութեան սկզբից մինչև օրս Նուազեր գիւղն այնպիսի վատ բերք չէ ստացել, ինչպէս այս տարի. որաեղ եղել է չէ եղել, Նուազերում միշտ հացի առատութիւն է եղել. շրջանումս նա յայտնի է եղել որպէս շտեմարան։ Շրջակայ գիւղերից շատերն են օգտվել նրանից։ Անցեալ աշնան և ձմեռն ընդհարումների ժամանակ էլ, երբ հաղորդակցութիւնները կտրված էին, նուազցիները իրանց աւելորդից բաժին հանեցին հարևան գիւղերին (ի հարկէ փոխով), իսկ այս տարի նրանք էլ շրջակայ գիւղերի հետ հացի մեծ նեղութիւն են կրելու։

Բաղա գիւղը՝ չը նայած իր անցեալներում հացի առատութեան, այնուամենայնիւ. նրանից ոչ մի օժանդակութիւն ստացած չենք. առհասարակ մինչև ընդհարումների սկզբները մենք շատ սակաւ յարաբերութիւն ենք ունեցել նրանց հետ և շրջանումս անհամակրանքով ենք վերաբերվելիս եղել զեկի բազմաթրեցիները՝ որպէս մթին և մինչև ծուռը թուրքամոլութեամբ վարակված մարդանց։

Ինչպէս յայտնի է, այս տարի Բաղայի արտերն էլ գլխովին կարկտահար եղան։

Զարդախլու գիւղը 6—7 տարի է, ինչ զուրկ է հացի բերքից, ենթակայ լինելով մշտապէս զանազան ազէտների ու պատահարների։

Կործանված Ղազախի գիւղացիք այնքան էլ վար ու ցանքսով չէին պարապում, գերադասելով արհեստով պարապելը իրանց կից Գեաարէզի գործարանում։

Զագերը հացի արդիւնաբերութեամբ երբէրդ տեղն է բռնում Նուազերից յետոյ, իսկ Բարսումն ու Գառնակերը միատեսակ պտղաբերութեամբ՝ յետին տեղը։ Վերջին երկուսը այգիներ էլ ունեն, բայց մի զգալի օգուտ չեն կարողանում ստանալ, որովհետև թէ տաբաժութեամբ է քիչ և թէ որակութեամբ ստոր, իսկ բացի այս իրանք, առանց ուրիշների էլ լաւ կենսոյներ են։

Զը նայած, որ մեր շրջանն այս տարի աղատ եղաւ գիւղացու ամենատելի թշնամի երկայնէն պատուհաս կարկուտից, այնուամենայնիւ հացատատիկները մի տեսակ նիհար, գալկացած ու նուազ էին, շատերն էլ փուչ, այնպէս որ ակնկալածի մէջ կատարեալ խաբվեցինք։

Այսպիսով յիշեալ գիւղօրայքը ստիպված կամ ամբողջ տարվայ կամ ամենապակասը կէս տարվայ հաց պէտք է գնեն Գանձակից, միակ յարմար տեղից, որը երկու օրվայ ճանապարհ է։ Ես, որ մինչև ծուռս գիւղացի եմ, հաստատ գիտեմ, որ փող չը կայ գիւղերումս (շատ սակաւ բացառութեամբ), բայց միևնոյն ժամանակ համոզված, որ անկարելի է առանց հացի ապրելը։ Ուստի է մեզ հէնց այս գլխից, որն ամենապատակայարմարն է, ծախել եղած չեղածից—կով, եզ—և պատրաստութիւն տեսնել, որովհետև չը գիտենք, թէ վաղը կամ միւս օրը ինչեր կարող են պատահել...

Անցեալներում գրել էի, որ Զագերից 6 հատ, իսկ Բարսումից 2 հատ եզ անհետ կորան. լսում ենք, որ կառավարութիւնը 300 ր. տուգանքի է ենթարկել Սէյիալի գիւղի թուրքերին։ Բայց ճշմարտութիւնը պաշտպանելու համար ստիպված եմ ասել, որ սէյիալցիների միակ մեղը նրանում է կայանում, որ եզները նրանց գիւղի միջով են անցկացրել և նրանք երկիւղից չեն կարողացել խօսք ասել աւազակներին, թերևս ջանքեզարներին։

Սեպտեմբերի սկզբներում Մէլիք-Առստամենների Դաւթուլ գիւղացիներից 7 հատ ձագամէր գտել են տարել. հետքը հասցրել են Բալչուի մէջ Բաղմանլարի այդ տխրահռչակ արուարձանը։ Ասում են, որ վճռված է Բալչուի գիւղացիներից տուգանք առնել, որ հաւանական է թւում մեզ։

Անցեալ շաբաթ Փիր գիւղից մի երիտասարդ հոն քաղելիս իրանց այգումը սպանվում է. ամսիս 13-ին մի խումբ փիրեցի երիտասարդներ գնում են հանդը պտուղ քաղելու. ճանապարհին յանկարծ պատահում են դէմ առ դէմ աւազակների. սկսվում է հրաացանձգութիւն, որի ժամանակ վիրաւորվում են 3 հայ, մէկը ծանր։ Արդեօք սրանք կռուի նախերգանքը չեն...

Ց. Երիցեան

Ց. Գ.—Այս գիշեր մեր գիւղից մի ձի և երկու դրսից գողացան. բաւական յանդուգն և ծրագրված գողութիւն է երևում. դժուարանում ենք Թուրքի վրա կասկածելու։

Նոյն

—

Կարս, 2 սեպտեմբերի

Երդուեալ հաւատարմատար Ց. Տէր-Մարտիրոսեանի, Զ. Աբաջեանի, Ա. Սրբոյչիկեանի,

Մ. Մուրուզեանի և Ս. Գետրոսեանի նախաձեռնութեամբ եռանդուն կերպով աշխատում են մօտ ապագայում փոխադարձ վարկի ընկերութիւն հիմնել տեղումս։ Մօտ հարիւր հինգ մարդ արդէն տուել են իրանց համաձայնութիւնը և համաձայն կանոնադրութեան պահանջվելիք գումարն արդէն հաւաքված է։ Բացվելիք ընկերութեան վերոյիշեալ լիազօրներն այսօր ներկայացան տեղս նահանգապետին և, հանդամանօրէն բացատրելով յիշեալ հիմնարկութեան անհրաժեշտութեան մասին, Նրան ներկայացրին գործին վերաբերեալ իրենց ընկերութեան կանոնադրութեան հետ միասին։ Շնորհաւորելով այդ օգտակար նախաձեռնութիւնը՝ յոյս ունենք, որ պատշաճաւոր իշխանութիւնն իր կողմից չը պիտի զլանայ զոհացում տալու այդ հասունացած կարիքին ըստ կարելոյն շուտով։

Մ. Մուրուզեան

ՅՈՎՀԱՆՆԵԱՆ ԴՊՐՈՅԻ ԴԷՊԻԸ

Մեր զպրոցական տարեգրութեան մէջ մի տխուր էջ բացող այդ դէպքի մանրամասնութիւնների արձանագրութիւնը կարևոր համարելով, տալիս ենք մի քանի տեղեկութիւններ, որոնք պարզ ցոյց կը տան թէ էջմիածնի բարձր հոգևոր իշխանութեան և թէ մեր «ազգային բիւրօկրատիայի» գործելակերպը, բացարձակ, սահմանափակ վարչական վարմունքը և օրինականութեան, բարոյականութեան որևէ սկզբունքի բացակայութիւնը նրանց գործողութիւնների մէջ։

Ինչպէս գիտենք, նախկին հոգևորականութիւնը այն ժամանակ, երբ նա օրինաւոր պաշտօնավարութեան մէջ էր և դեռ ոչ մի կարգադրութիւն չէր եղել հոգևորականն նոր ընտրութիւն կատարելու, ընտրից զրպրոցի տեսուչ պ. Լևոն Սարգսեանին։ Այս ընտրութիւնը կաթողիկոսը հաստատեց կոնդակով և, բացի դրանից, մի առանձին կոնդակ ևս ուղարկեց հոգևորականին՝ շնորհաւորելով նրա կատարած աջող ընտրութիւնը։ Դրանից յետոյ միայն կատարվեց 4 նոր հոգևորականների ընտրութիւնը։ Դժբախտաբար զրպրոցի և հայ ժողովրդի համար, շնորհիւ ծխականների անտարբերութեան, Բեթղեհէմի եկեղեցու 18 ծխականների ժողովով ընտրված պատուիրակների քուէներով դաշնակցական բիւրօկրատները կարողացան ընտրել տալ իրանց թեկնածուներին։ Եւ միանգամայն, որ հոգևորականութեան կազմի մէջ կարողացան մտնել Տ. Յովհաննիսեանի և ընկերների պէս հոգևորականներ, պէտք էր սպասել, որ զրպրոցի խաղաղ կեանքը կընդհատվի, որ նա ասպարէզ կը դառնայ կուսակցական նեղ կրքերի, որ մտաղ սերբնդի շահերը կը մոռացվին։ Այդպէս էլ եղաւ։

Եւ հշմարիտ, այնուհետև ինչ որ անցաւ Յովհաննեան զրպրոցում, ինչ կարգադրութիւններ որ եղան թէ Տաճատ, և Ներսէս վարդապետների պէս ինտիգան դիւանագէտների կողմից, բայց կաթողիկոսական անունով քօղարկված, և թէ իրանց 4 հոգևորականների կողմից, այդ կարգադրութիւնները կրում են «թաչֆպայական» բնաւորութիւն։

Սկզբում, կաթողիկոսի անունից խորհուրդ տրվեց Լ. Սարգսեանին հրաժարվել, բայց նոյն խորհուրդը չը տրվեց, ի նպաստ թէ, այն հոգևորականների, որոնք զործում էին ապօրինութիւն։ Երբ ոչ-արժանավայել խորհուրդը չը լսվեց, կաթողիկոսի անունից եկաւ այսպիսի հեռագիր.

«Թիֆլիս, առաջնորդ Սաթունեան արքեպիսկոպոսին.

«Որովհետև իմ բոլոր յորդորները զուր անցան, ուստի գումարեցէք հոգևորականներն, առանց տեսչի, և ձեռնարկեցէք զրպրոցի բացմանը»։

Այդ հեռագրին առաջնորդը պատասխանում է, թէ այդ առաջարկը անհնարանալի է, որովհետև ինչպէս կարելի է հոգևորականներն դումարել առանց տեսչի, երբ տեսուչը իր պաշտօնի մէջ է և կասկի համաձայն նա պէտք է մասնակցէ նիստին։ Այդ կարգադրութեան դէմ բողոքում է և իսկական հոգևորականներ ու Յովհաննեան ցեղի ներկայացուցիչ պ. Ալէք. Ս. Անանեանը։

Եւ ահա էջմիածնից ստացվում է հետևեալ երկրորդ հեռագիրը առաջնորդի անունով.

«Հեռագիրը պարզ էր. զումարել նիստ միայն հոգևորականներից և լուծել բոլոր վիճելի հարցերը տեսչի և ուսուցիչների վերաբերմամբ»։

Պարզ է, որ էջմիածինը, շատ լաւ իմանալով, որ տեսչի բացակայութեամբ՝ դաշնակցական հոգևորականները մեծամասնութիւն կը չունենան, և որովհետև նրանք իրանց գործողութիւնների մէջ սոլոր են զեկավարվել ոչ մի օրէնքով, ուստի անմիջապէս կը հեռացնեն տեսչին, նոր տեսուչ կընտրեն և էջմիածինն էլ այն ժամանակ ինքն չքմեղ կը հանդիսանայ, ասելով՝ «ինչ անեմ, հոգևորականներն է արձակել»։

Եւ ահա առանց որևէ պատճառի, առանց որևէ յանցանքի, այն տեսուչը, որ դեռ 2 ամիս առաջ կաթողիկոսական կոնդակով հրաչակվում էր ամենաարժանաւորը, այժմ հեռացնվում է պաշտօնից, և այն ըսպէին, երբ արդէն ուսուցչական խումբ է կազմված և ուսումը պէտք է վաղուց սկսվէր։

Մեզ կասեն. այդպէս է կաթողիկոսի կամքը։ Բայց հօ չէ կարելի ամեն մի կամայականութիւն, հրէշաւոր ապօրինութիւն արդարացնել կաթողիկոսական կոնդակով։

Եւ այդ է պատճառը, որ հասարակութեան մէջ սաստիկ յուզմունք է տիրում։ Հասարակութիւնը չէ կարող չը յուզվել, որովհետև դէպքը շատ վրդովեցուցիչ է։ Եւ արդէն բողոքներ սկսել են կազմակերպվել։ Այսօր բերում ենք այդ բողոքներից մէնը։

Նրանք, որոնց համար թանգ են մայրենի զպրոցի և մտաղ սերնդի շահը, արդարութեան, ճշմարտութեան օրինականութեան շահերը, որոնք զատապարտում են ընութիւնը, կամայականութիւնը և մեր զպրոցական, հասարակական հիմնարկութիւնների բարգաւաճումը տեսնում են միայն օրինականութեան մէջ, պէտք է միացնեն իրանց բողոքների ձայները արդէն հնչված ձայնի հետ։

Պէտք է զգացնել տալ էջմիածնին և «ազգային բիւրօկրատներին», որ չէ կարելի անպատիժ կերպով ոտնակոխ անել օրինականութիւնը և արդարութիւնը։

Հ. Ա.

ԲՈՂՈՔՆԵՐ

I

Էջմիածին, Ամենայն Հայոց կաթողիկոսին.

Ծանօթանալով Յովհաննեան զպրոցի տեսչական հարցի հետ և ճանաչելով չորս հոգաբարձուների գործողութիւնները և զանգատը անպրինցիպային, ծաղած բացառապէս անձնական հողի վրա՝ տեսուչ Լևոն Սարգսեանի դէմ, մենք բարձրացնում ենք մեր ձայնը նրանց անկօրէրկա, ակնյայտի կրքոտ և զպրոցական հոգաբարձուի կոչման անարժան գործողութիւնների դէմ։

Ցանուն արդարութեան, զպրոցական և հասարակական կարգապահութեան, որ ոտնակոխ է արված յիշեալ հոգաբարձուների ձեռքով, մենք խնդրում ենք Ձեր Վեհափառութիւնից թողնել իր զօրութեան մէջ օրինաւորապէս տեսուչ ընտրված Սարգսեանի հաստատման կօնդակը և բարեհաճել հրամայել անմիջապէս սկսել ուսումը զպրոցում։

Բազմաթիւ ստորագրողների կողմից—երդուեալ հաւատարմատարներ՝ Սպէնդիարեան, Միք. Աթաբէկեան, Ռուբէն Յովհաննիսեան, Մամիկոն Գէորգեան, երեցփոխներ՝ Ա. Վարդապետեան, Ստեփան Մնացականեան և ուրիշներ։

II

Նորին Վեհափառութեան Կաթողիկոսին Ամենայն Հայոց, Էջմիածին.

Համաձայն Ձեր Վեհափառութեան հեռագրին, առաջնորդը, վաղը, սեպտեմբերի 26-ի կէսօրին, նիստի է հրաւիրել Մ. Յովհաննեան զպրոցի հոգաբարձական խորհուրդը, առանց տեսչի, լուծելու համար տեսչի և ուսուցիչների մասին խնդիրները, համաձայն այս խնդիրները վիճելի։ Ի նկատի ունենալով, որ այդ խնդիրները արդէն լուծված են նախկին նիստերում, հոգաբարձութեան օրինական կազմով և արձանագրութիւնները հաստատված և ստորագրված են, ես խնդրում եմ, խուսափելու համար սուր ընդհարումներից և յանուն զպրոցի բարեաջողի, առաջարկել առաջնորդին յետաձգել նիստը, որովհետև ես ներկայացնելու եմ ձեզ պատճառաբանված զեկուցագիր՝ մասնագետ-իրաւագէտների եզրակացութեամբ տեսչի ընտրութեան լիակատար օրինականութեան և խորհրդի նախորդ նիստերի կանոնաւորութեան մասին։

Ա. Անանեան

ԲԱՐԶՐԱԳՈՅՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

—Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը հարց է յարուցել երկու նոր համալսարաններ բանալու համար։ Վաղշվայի համալսարանը մտադրութիւն կայ յատկացնելու բացառապէս լեհ ուսանողների համար։

—Մօսկվայի համալսարանի տեսուչը համալսարանի շինութեան մէջ կախել է մի յայտարարութիւն, որով յայտնում է, որ Մօսկվայի քաղաքապետ գեներալ Բէյնբօտը դիմել է իրան խնդրելով՝ տեղեկացնել ուսանողներին հետևեալը. սեպտեմբերի 18-ին և 19-ին համալսարանի շինութեան մէջ ուսանողական ժողով է գումարվել, ուր մասնակցել են այնպիսի անձինք, որոնք համալսարանի կազմին չեն պատկանում և իրանց համարում են սոցիալ-յեղափոխականներ և նոյն կուսակցութեան զանազան դիրքերը, նոյնպէս և ուրիշ զպրոցների ուսանողներ և բանուորներ։ Բաղաքապետը յայտարարում է, որ այդպիսի ժողովները, իբրև օրէնքով անթոյլատրելիներ, անմիջապէս կը լուծվեն։

—Սեպտեմբերի 20-ին, ցերեկվայ ժամը 12-ին, Կոնստ. մեծէվ. ինստիտուտի № 1 լաբորատորում կայացել է ընդհանուր ուսանողական համաժողով։ Տակտիկայի հարցի մասին վիճաբանութիւնները վերջանալուց յետոյ, ձայների մեծամասնութեամբ ընդունվել է հետևեալ բովանդակութեամբ մի բանաձև. «Առանց փոխելու յեղափոխական մասսային ամեն մասնչելի միջոցներով հաստատուն աջակցութիւն ցոյց տալու մասին կայացրած վճիռները, Կոնստ. մեծէվ. ինստիտուտի ուսանողների համաժողովը որոշել է ինստիտուտը բացված համարել այն պայմանով միայն, որ ժողովրդի կողմից կառավարութեան դէմ սկսած կռուի ամենալարված, սուր մոմենտում ինստիտուտը թողնել ժողովրդի տրամադրութեան ներքոյ։

—Մօսկվայի համալսարանի մէջ կատարվող անցքերին մեծ ուշադրութեամբ են հետևում կառավարական շրջաններում։ Այդ առիթով մանաւոր խորհրդակցութիւն է տեղի ունեցել ներքին գործերի և ժողովրդական լուսաւորութեան մի նիստի մէջ, որտեղ վճռված է, որ այն դէպքում, եթէ համալսարանի խորհրդին աջողվելու չը լինի սեպհական միջոցներով ծաղած բարդութիւնները մեղմել, փակել համալսարանը մինչարի իշխանութեամբ և վերբանալ միայն այն անձանց համար, որոնք ցանկութիւն կը յայտնեն անպայման ենթարկվել պրոֆեսորի խորհրդի բոլոր կարգադրութիւններին։ Բացի դրանից, արտաքսվածներին կարգելվի մուտք ունենալ որևէ ուրիշ բարձրագոյն դպրոցում։

ԲԷԲԵԼԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՈՐԾԱԴՈՒԼԻ ՄԱՍԻՆ

Մանկէմի կօնդրեսսի նիստը, որ տեղի ունեցաւ մօտ օրերս, արտակարգ հետաքրքրութիւն էր ներկայացնում, որովհետև նա նուիրված էր ընդհանուր գործադուլի հրատապ հարցին։ Նախորդ օրվայ մեծ մասը կանցեցին «Vorwärts» լրագրի առիթով սկված անընշան հետաքրքրութիւն ունեցող վիճաբանութիւնները, որոնք անձնական միջադեպի բնաւորութիւն ընդունեցին։ Ընդհանուր քաղաքական գործադուլի հարցի վերաբերմամբ զեկուցանում էր Բէբելը, որ առաջարկից հետևեալ բանաձևը.

1) Համագումարը հաստատում է ենայի համագումարի կայացրած որոշումները ընդհանուր քաղաքական գործադուլի մասին։ Երբ կուսակցութեան (Parteivorstand) կառարողական կոմիտեոր անհրաժեշտ կը համարի ընդհանուր գործադուլի դիմելու, նա պարտաւոր է այդ առիթով յարաբերութիւն սկսել արհեստակցական (պրոֆեսիոնալ) միութիւնների (Gewerkschaften) գլխաւոր յանձնաժողովի հետ և ձեռք առնել բոլոր հարկաւոր միջոցները գործի աջողութիւնը ապահովելու համար։

2) Բանուորական պրոֆեսսիոնալ միութիւնները այնպիսի կազմակերպութիւններ են, որոնք միանգամայն անհրաժեշտ են կապիտալիստական հասարակութեան մէջ բանուորների դասակարգային վիճակը բարձրելու համար, և իրանց կարևորութեամբ նրանք ոչնչով պակաս չեն օսցիալ-դեմօկրատական կուսակցութիւնից, որը իրան նպատակ է դրել կռիվ մղել բանուոր դասակարգի մտաւոր մակերևոյթը բարձրացնելու և նրա իրաւունքները հաւասարցնելու հասարակութեան միւս դասակարգերի իրաւունքների հետ քաղաքականի նկատմամբ, իսկ ապագայում ձգտել ազատելու բանուոր դասակարգը ամեն տեսակ կեղեքումներից և շահագործումներից՝ վարձատիրի սիստեմի ոչնչացնելով կազմակերպելով արդիւնաբերելու և փոխանակելու ձևը, որը հիմված է բոլորի օսցիալական հաւասարութեան վրա, այսինքն դէպի օսցիալական հասարակութիւնը։ Ահա այդ նպատակին պէտք է ձգտէ պրոֆեսիոնալ միութիւններին պատկանող ամեն մի բանուոր, որ ունի դասակարգային ինքնաճանաչութիւն։ Այդ պատճառով կուսակցութիւնը և պրոֆեսսիոնալ միութիւնները յանախ պէտք է գործեն մի նպատակի համար և փոխադարձ համաձայնութեամբ։ Միաձեւակ մարտաքայլ ունենալու համար երկու կազմակերպութիւնների կենտրոնական բիւրօները նախապէս պէտք է աշխատեն խորհրդակցել, պայմանաւորվել իրար հետ։ Պաշտպանելով իր առաջարկած այդ բանաձևի նախագիծը, Բէբելը ասաց հետևեալը.

«Երբ մենք անցեալ տարի հեռանում էինք Ենայի համագումարից, մենքից և ոչ մէկը չէր ենթադրում, որ մեզ վիճակված էր լինելու այս տարի էլ զբաղվել ընդհանուր քաղաքական գործադուլի հարցով։ Բայց հանդէս եկան մերկացումներ, որոնք ապացուցնում էին, որ կուսակցութեան կենտրոնական մարմինը և մանաւանդ ես, պրոֆեսսիոնալ միութիւնների գլխաւոր յանձնաժողովների հետ կոնֆիդենցիալ բանակցութիւններ վարելու ժամանակ, հրաժարվեցինք Ենայի հանդամանքի որոշումներից մասսայական գործադուլի հարցի առիթով։ Բայց իրողութիւնը սա է. ես նոյն ժամանակ ասացի միայն, որ ներկայ ժամանակում հարկ չը կայ նոյն իսկ մտածել մասսայական գործադուլ անելու մասին, որը կատարեալ պարտութեամբ կը վերջանար։ Ընդհանուր գործադուլ Գերմանիայում և մանաւորապէս Պրուսիայում ամենեին այն չէ ներկայացնում, ինչ որ ուրիշ ազգութիւնների մէջ։ Մեր հանդէպ կանգնած են թագաւորութիւն, իւնկերութիւն և արդիւնաբերութիւն բարօնների ոյժերը։ Ընդհանուր գործադուլ անելու ամեն մի փորձ կը ճնշվի ամենասոսկալի կերպով։

Մինչև որ մենք լաւ չը կազմակերպվենք, ընդհանուր գործադուլի փորձը ուղղակի անխղճութիւն կը լինի։ Մենք չենք կարող պատասխանատուութիւն յանձն առնել նրա համար։ Ի հարկէ, ազդերի կեանքում պատահում են մօմենտներ, երբ հարկաւոր է լինում coûte que coûte կռուի մէջ նետվել, թէկուզ պարտութեան երկիրղով համակված։ Սակայն այդպիսի մօմենտ չը կար անցեալ զարնանը։ Այն հրամանատարը, որ առաջնորդում է իր զօրքը դէպի անպայման պարտութիւն, խելագար կը յայտարարվի կամ թէ զնդապետ կը լինի 24 ժամվայ մէջ։ Բայց պրոֆեսսիոնալ միութիւնների պարագաները իմ խօսքերից, որոնց հետ նրանք բոլորովին համաձայնվեցին չափազանց լայն եզրակացութիւն հանեցին և վճռեցին, որ ես ընդհանրապէս հրաժարվեցի մասսայական քաղաքական գործադուլի մտքից։ Ներկայումս մենք գեռ ևս չափազանց քիչ կազմակերպված բանուորներ ունենք։ Մինթէ կարծում էք, որ եթէ նրանք բոլորն էլ գործադուլ անելու լինէին, կարող էր այդ բանը առանձին ներգործութիւն ունենալ։ Ի հարկէ, ոչ։ Մեզ ասում են, որ կուսակցութեանը կաղակցէին պրոֆեսսիոնալ միութիւնների անդամները, և օրինակ են բերում ուրիշ երկիրները, ուր տեղի են ունեցել ընդհանուր գործադուլներ։ Բայց այդ որ երկիրներն են։ Բուսասանը։ Սակայն նոյն իսկ նրա յեղափոխութեան ընկված շրջանում ժողովրդական մասսաները հրաժարվեցին հետևել կուսակցութեան պայմանանշանին (պարոլին), մօտինար համարելով անբարեյաջող։ Բացի դրանից ռուսական պայմանները նման չեն մերներին։ Միւս կողմից, ես համաձայն չեմ մեր այնպիսի ընկերների հետ, ինչպիսին է գոհասը Դաւիդը, որը կարծում է, որ մենք ընդմիշտ ապահովված ենք յեղափոխութեան դէմ։ Յեղափոխութիւնները կատարվում են ոչ թէ մեր շնորհիւ, այլ անհաղթելի հետևանք են վերևից կատարվող ծայրայեղ ճնշման (ձայներ. «Բրաւ է»)։ Այդպիսի բաների մասին հարկ չը կայ երկար խօսելու, մանաւանդ կուսակցական համագումարում, բայց ես պէտք է ասեմ ձեզ, որ եթէ փորձեր անելու լինեն ընդհանուր ընտրողական իրաւունքի դէմ ըէյխստագի ընտրութիւնների ժամանակ կամ թէ միութիւնների իրաւունքի դէմ, որ առանց այն էլ շատ սահմանափակ է, այն ժամանակ խօսք անդամ չէ կարող լինել այն հարցի մասին, թէ ուզում ենք մենք, կամ չենք ուզում ընդհանուր գործադուլը։ Մենք պարտաւոր ենք (Ջերմ ծափահարութիւններ)։ Ազատութիւնը, որ մենք արդէն վայելում ենք, չենք թոյլ տալ մեզնից խլելու։ Ապա թէ ոչ մենք կը լինենք ողորմելի, վատթար մարդիկ (բուռն, երկարատև ծափահարութիւններ)։ Լինում են ըօպչներ, երբ արդէն ուշ է փիլիսոփայութիւններ անել և երկար ու բարակ դշռդատել, երբ հարկաւոր է կրակի մէջ նետվել, ու կեանքը զոհել (աղմկալի ծափահարութիւններ)։ Ես համաձայն եմ, որ մենք չափազանց քիչ ենք դեռ տարել պրուսական լանդտագի մասին։ 30 տարի սը-րանից առաջ ես ինքս եմ ահեղ ֆիլիպիկա արտասանել լանդտագի ընտրութիւններին մասնակցելու դէմ և ընդունել տուեցի մի շատ կծու բանաձև։ Խոստովանում եմ, որ դա յիմարութիւն էր, բայց փաստերը չէ կարելի ջնջել։ 50 տարի շարունակ բանուորները անտարբեր էին վերաբերվում դէպի ընտրութիւնների նուաստիման սիստեմը և այժմ յանկարծ ուզում են միանգամից ստեղծել այդ շերտի վրա մասսայական տրամադրութիւնը, որ անհրաժեշտ է մասսայական գործադուլի համար։ Այդպէս ուրեմն, չը խաբենք մեզ այդ առիթով։ Թող մենք մեր խոստովանութեամբ ուրախացնենք մեր հակառակորդներին, բայց մենք անկեղծաբար պէտք է արտայայտենք այն, ինչ որ մտածում ենք. որովհետև մենք չենք ուզում զբաղվել ապագայի երազներով, այլ ցանկանում ենք ի նկատի առնել բէալ պայմանները»։

Այնուհետև Բէբէլը մատնանշում է, որ հակառակ ընդհանուր գործադուլի կողմնակիցների հաւատացումներին ոչ Համբուրգում, ոչ Պրուսիայում, ոչ էլ Սաքսոնիայում բարեյաջող տրամադրութիւն չը կայ նրա վերաբերմամբ բանուորների մէջ, և խնդրում է համագումարին մերժել այն բոլոր առաջարկութիւնները, որոնք վերաբերում են մասսայական գործադուլի շուտափոյթ կազմակերպման։ Այդ առաջարկութիւնների թւում կար մէկը, որ պահանջում էր ընդհանուր գործադուլ յայտարարել այն դէպքում, եթէ Գերմանիան մէջամտելու լինի ռուսական գործերին ռուսաց յեղափոխութիւնը ճնչելու նպատակով։ Ահա թէ ինչ է ասել Բէբէլը այդ առաջարկութեան առիթով. «Ես մի այդպիսի քայլ Գերմանիայի կողմից անկարելի եմ համարում։ Ի հարկէ, կայսրը, իշխան Բիւլովը, բոլոր ըէակցիոներներն ու բուրժուաները սրբոտանց համակրում են Պետերբօրգի ըէժիմին և ռուսական կառավարութեանը և աջողութիւն են մաղթում նրանց ռուսաց յեղափոխութիւնը ճնչելու գործում։ Բայց ցանկութիւնից մինչև գործը մի անգին քայլ է։ 1792 թւի փորձերը շատ էլ մխիթարական չեն։ Բացի դրանից Պրուսիան այժմ համաշխարհային կօալիցիա ունի ոչ իր կողմում, այլ իր դէմ։ Իր միջամտութեամբ ռուսաց գործերին Գերմանիան համաշխարհային պատերազմ կը ստեղծէր, որի հետևանքները այնքան դժուար կը լինէր նախատեսել, որ մեր կառավարող շրջանները երբէք այդպիսի այլ չեն համարձակվիլ անելու։ Ես վերջացրի ասելիքս»։ («Բ. Բ.»)

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՅՑ

Սեպտեմբերի 20-ին

«Իրշադ» թերթը լրագրի ներկայ տարվայ № 183-ում տպված «Ինչ պէտք է անենք» յօդուածի թարգմանութիւնը, որը բերված էր «Մշակի» № 184-ում, իր ժամանակին բուռկան տարաձայնութիւնների տեղիք տուեց Շուշու հայերի և թուրքերի շրջանում։

Թուրքերը սկզբից մերժում էին, ասելով, որ այդ վիրնագրով և այդօրինակ պրօվօկացիական ոգով գրված յօդուած երբէք չէ եղել «Իրշադ»-ի մէջ, և ուեւայնում էին, որ այդ յօդուածը շինծու է և «Մշակի» երևակայութեան արգասիք։

Բայց երբ հայերը ներկայացրին թուրքերին «Իրշադ»-ի № 183-ը, այդ ժամանակ մեր հաբեանս-եղբայրները սկսեցին խոստովանել «Իրշադ»-ի անտակտ և ֆլասակար ուղղութիւնը հայ-թուրքական խնդրի վերաբերմամբ, և նրանցից շատերը սկսեցին համոզել հայերին, որ իբր «Մշակ»-ն էլ նոյն ուղղութեանն է հետևում ինչ որ «Իրշադ»-ը, հետևապէս դիմում անել կառավարութեան դադարեցնելու այդ երկու թերթերի հրատարակութիւնը։

Թուրքերի այդ առաջարկութիւնը դրական հետևանքի չը հասաւ և մերժվեց հայերի կողմից։

Մենք անչաւ դատելով՝ կասենք մեր հաբաղաքացի թուրքերին, որ «Մշակ»-ը իր հիմնադրի օրից սկսած մինչև այժմ եղել է ազգերի համերաշխութեան ախոյեան-քարոզիչ և երբէք չէ թոյլ տուել իրան և չէ թոյլ տալիս ներկայումս էլ դաւաճանել իր սկզբունքին, մտցնել իր էջերի մէջ նեղ-ազգայնական պրօվօկացիական ոգով ներշնչված յօդուածներ, ինչպէս այդ անում է շաբաթական հոդվածաց «Իրշադ»-ը։

Մեր թուրք հարևաններին բարեկամաբար խորհուրդ կը տայինք, փոխանակ դադարեցնել տալու թերթը, դիմում անէին «Իրշադ»-ի խմբագրութեան և խնդրէին՝ չը զետեղել իր էջերում թուրք ինտելիգենտ հասարակութեան տակտիք-թղթակիցների տաղանդ նամակները կամ յօդուածները հայ-թուրքական խնդրի առիթով գրված, որպիսի նամակները և յօդուածները «Իրշադ»-ը ամփոփելով իր էջերում, թէ ինքն է «հալած իւղի» տեղ ընդունում և թէ ընդունել տալիս թուրք կիսակրթ մասսային։

Այդպիսի տակտիք-թղթակիցներից մէկի՝ ոմն Բէհբուդովի գրած նամակը Աղդամից՝ կարդացինք «Իրշադ»-ի վերջին օրերս լոյս տեսած համարներից մէկում, այն է № 215-ում,

Բէհբուդովը խօսելով իր նամակում հայ-թուրքական խաղաղաբար կոմիսիայի Շուշի-Եւլախ գծի վրա կատարած երկու ազդերի հաշտութեան գործի աջող արդիւնաւորութեան (!!) մասին, աւելացնում է որ, «Դաշնակցութիւնը, նորից ամեն տեղ հայ պրօվօկատորներից խմբեր կազմակերպելով, յարձակվից Ջանդզուրի և Զէբրայիլի գաւառներում գտնվող թուրք գիւղերի վրա, սպանեց, թալանեց, կանանց և երեխաներին մերկ ու բոկոտն անպատանները ցրեց»։

Նամակագիրը մեծ զարմանքով զոչում է, թէ ինչու ռուսաց մինիստրներից սկսած մինչև Փոխարքան, նահանգապետները, զաւառապետները և ստորին ոստիկանն անգամ անուշադիր են դէպի հայերի ներկայ բռնած դիրքը թուրքերի վերաբերմամբ, որոնց (հայերի) սոսկ նպատակն է թուրքերին ընկնջել և այնուհետև «հայկական անկախ կառավարութիւն ստեղծել Ռուսասանում»...

Այդպէսնակ ատեղ-ցվեղ, մտացածին նպատակներ վերագրելով հայերին, Բէհբուդովը իր նամակը այսպէս է վերջացնում.

